

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 ռուբլի: Կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄՆՆ ՏԵՂ 5 40Գ.
Թիֆլիսում գրվում են խմբագրությունները:
Մեր հասցեն՝ Тифлиς, редакция «Мшакъ»
Вазарная ул. д. Тамамшова № 16.
Կամ Тифлиς, Редакция «Мшакъ»
ՏԵՂԷՓՕՆ № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի Կերակի և տոն օրերէրէր).
Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզով
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաւորչը տողատէրին 10 կոպէկ.
ՏԵՂԷՓՕՆ № 253.

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՕՆ

ԱՐՏԱՆՏԻՆԻ ԵՎԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՕՆ

Երկուշաբթի, հոկտեմբերի 20-ին

Հայ Իրաւաւորական Ընկերակց.

Կը ներկայացնէ
առաջին անգամ ՇԻՐՎԱՆԶԱՆԻԻ նոր դրաման

ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԿՐԱ

5 արարուածով
Մանկացում են. Օր. Աղաման, ա. տ. Արաք, Գուրգան-Նոնիկան, Միկիթան, Յամակ, պ. պ. Աւետան, Ջարիֆան, Քաշեան, Մամիկոնեան, Յարութիւնեան, Վանդիւր և ուր.

Սկիզբը երեկոյան ուղիղ ժամը 8-ին
Ի հոկտեմբ. Ս. Քափանկան
Հայաց Դրամատիկ Ընկերութիւն

Արտաստանից վերադարձաւ

ԲԱՆԳԱԿԱՆՈՐԺ

Միքայէ Միքայէանը

Ստորագրելու մասին տեղը գտնվում է
Ֆոնտիկովի անունը կայարանի կողքին
1—1

ԱՍՏՆԱՐԱՅԻ

Մ. Գ. ԴԱՆԻԷԼ-ԲԵԿ

Ընդունելու } Առաւօտեան 10—2 ժ.
Թիւր } Երեկոյան 4—6 ժ.
Հասցէ՝ Ртищевская ул., № 7.
(Տ. Շ.)

30—16

ԱՐԱՐ, ԲԱՅՑ ԱՆՃԱՄԱՆԱԿ ԳԱՆԱԶ

Սա Սահակ կաթողիկոսի մերժումը՝
մասնակցել ամենայն հայոց կաթողի-
կոսի ընտրութեան իրեն կաթողիկոս
տանն Կիլիկիոյ, որի մասին հայրը-
ղէց «Մշակ» երէկ, թէ ինչպէս է
գալիս արդար պատճառաբանութեամբ,
բայց իրեն անժամանակ կատարված
պահանջ, պէտք է համարել անընդո-
ւնելի և միտումնաւոր առաջ բերել նո-
րանոր խոչընդոտներ կաթողիկոսական
ընտրութեան գործում:

Կիլիկիայի կաթողիկոսութիւնը բաղ-
կացած է 7 թեմից, ուրիշն է պէտք
է ունենայ 7 աշխարհական և 7 հո-
գեւորական պատգամաւոր, սակայն
էջմիւռնի սինոդը ուղարկել է միայն
մի հրաւիրագիր, որով Կիլիկիայի հայ
կեղեցիքը և ժողովրդի տալիս է 2
ձայնի իրաւունք, այսինքն առաջար-
կում է ուղարկել միայն մի հոգեւո-
րական և մի աշխարհական ներկայա-
ցուցիչ: Կիլիկիայում հայ ժողովրդի բա-
նակը համարվում է մօտ 100,000. Բայց
Թիւրքիայում կան թեմեր, որոնց ժո-
ղովուրդը հազիւ 2000 հոգուց է բաղ-
կացած, այդպիսի թեմն ևս տալիս է
2 ներկայացուցիչ:

Հասկանալի է, որ դա անարդարու-
թիւն է և Կիլիկիայի կաթողիկոսի
արտունջը, բոլորը այդ մասին ար-
դարացի է:

Սակայն աւելի մեծ անարդարու-
թիւն ստանալով է իրա Ռուսաս-
տանի հայութեան մասնակցութեան
վերաբերմամբ: Ռուսաստանի հայ ժո-
ղովրդի քանակը հաշւում են մօտ
1 1/2 միլիոն, իսկ Թիւրքիայի մօտ
2 միլիոն: Եւ առայն, մինչև Ռուսաս-
տանի հայութիւնը 6 աշխարհական
պատգամաւորներով է մասնակցում
Եկեղեցու պետի ընտրութեան, Թիւր-
քիայի հայութիւնը մասնակցում է
47 պատգամաւորներով: Պարսկաս-
տանը, որ ունի մօտ 100,000 ժողո-
ւոր, մասնակցում է 2 պատգամա-
ւորով: Թիւրքիայի, Դարաբադի, Երևանի
թեմերից կարելի է մօտ 30 թիւրքա-
հայական թեմեր ստեղծել:

Ուրեմն, անարդարութիւնը միայն
Կիլիկիայի վերաբերմամբ չէ. այդ ա-
նարդարութեան դէմ վստահ ընդդրում
ենք մենք, ուսումնասիրելով, բոլորը
են և պարսկահայերը, Երևանի և Ամե-
րիկայի հայերը բոլորովին զրկված են
մասնակցութեան իրաւունքից: Այդ ևս
անարդարութիւն է:

Բայց ինչ կը շահենք մենք, եթէ
փոխանակ աշխատելու օրինական ճա-

նապարհով վերացնելու այդ անարդա-
րութիւնները, լռելեայն բողոք յայտ-
նենք այդ անարդարութեան դէմ՝ չը
մասնակցելով ընտրութեան:

Ոչ, պէտք է մասնակցել, պէտք է
Կիլիկիայի կաթողիկոսը և հայ ժողո-
ւորի պատգամաւորը զայնի էջմիւ-
ռին և այնուհետ, համազգային ժողովի
պաշտօնական նիստին բողոքելու այդ
անարդարութեան դէմ, միջնորդու-
թիւն յարուցանելու նոր, աւելի ար-
դար ընտրական օրէնքներ սահմանե-
լու:

Մենք, ի հարկէ, մեղադրում ենք և
էջմիւռնի սինոդին, որ ուղարկել է
Կիլիկիային միայն մի հրաւիրագիր:
Նա պարտաւոր էր ուղարկել 7 հրա-
ւիրագիր, 7 թեմերի անունով, ինչպէս
գործադրվել է բոլոր կաթողիկոսական
ընտրութիւնների ժամանակ մինչև
Գէորգ IV-ի մահը: Զիշտ է, Գէորգից
յետոյ առաջ կատարվում էին և
մերժել ձանաչել թիւրքիայում 65
թեմ և ձանաչել է միայն 47, համա-
րելով Կիլիկիայի և Աղթամարի կաթո-
ղիկոսութիւնները մի մի թեմ, բայց
Միսոգը պէտք է այս առաջ փորձել
վերահաստատել նախկին կարգը մինչև
նոր ընտրական օրէնքի սահմանումը:

Եթէ ի նկատի ունենանք, որ Թիւր-
քիան առանց այն էլ շատ պատգամա-
ւորներ է տալիս և ճշնող գերակշու-
թիւնը նրանց կողմն է, եթէ ի նկատի
ունենանք, որ ինքիւրը ոչ թէ քանակի,
այլ մասնակցութեան փաստի մէջ է,
մենք կը գտնենք այն եղբայրացութեան,
որ Կիլիկիայի կաթողիկոսի մերժումը
շատ անդէպ է և կարող է հակաթիւ-
րական ու անշատողական հարցեր
յարուցանել: Հայ ժողովրդի ներկայ վի-
ճակի մէջ ամենին տեղը չէ կրօնական
կամ եկեղեցական նոր պատկաւում-
ներ առաջ բերել:

Այդ պատճառով Սահակ կաթողիկո-
սի վարմունքը մենք գտնում ենք դա-
տապարտելի:

Հ. Առաքելան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բերլին, 16 հոկտեմբերի
Ամբողջ մամուլը միաբերան քննա-
դատում է Վիլհելմ Թագաւորի խօսու-
թը, որ տպված է «Daily Telegraph»-
ում:

Պանդերմանական և ձախակողմնա-
նաւորական մամուլը այդ խօսածին
վերաբերում է վերին աստիճանի ան-
համակրական կերպով և երկիւղ
է յայտնում, որ մի գուցէ փասակար
հետեւները առաջ գան Գերմանիայի
համար:

Կաթոլիկական «Germania» լրագի-
րը ասում է, որ այդ խօսակցութիւնը
հրատարակելով արդի ծառայութիւն
են մատուցանում թագաւորին և Գեր-
մանիային:

«Berl. Tag.»-ը երկիւղ է յայտնում,
որ մարդիկ գլուխները կը տարուե-
րեն այն առիթով, որ երկու պետու-
թիւնների վտանգի առաջարկութիւն-
ները իսկիւր մի երրորդը հրատարակու-
թեան է հանում:

«Vos. Zeit.»-ը մերկացումներից լա-
հետեւները է պատմում:

Միւս չափաւոր օրգանները խօսում
են բաւական զսպած տոնով, բայց
ոչ բացառական:

Առհասարակ լրագիրների մեծ մասը
վկայում է, որ թագաւորի մերկա-
ցումները պարտաւորում են բոլորին
արդէն բաշ յայտնի տեղեկութիւննե-
րը, նոր է միայն այն տեղեկութիւնը,
թէ թագաւորը մշակած է ունեցել
անգլիացիների պատերազմի պլանը
բուրբի դէմ:

Պաշտօնական շրջաններում այն
միտքն են յայտնում, որ բնաւ հա-
մաձայնութիւն կապված չէր, որ խօ-
սակցութիւնը հրատարակի
այժմեան թագուհին: («Հ. Գ.»)

Պարիզ, 16 հոկտեմբերի

Առաւօտեան և երեկոյան մամուլը
զվարճող օրգանները միաբերան քննա-
դատում են խօսակցութեան և Գերմանի-
այի խօսակցութեան միջև:

Յոյց է արվում ի միջի այլոց, որ
անգլո-բուրգական պատերազմի ժամա-
նակ Պրանսիան երբեք չէ փորձել եւ-
րոպական կողմից կազմել Անգլիա-
յի դէմ: Ռուսաստանը յիշատակում
էր Պրանսիային և Գերմանիային
բարեկամական առաջարկութիւններ
Անգլիային արեւմտեկութիւնը դա-
դարեցնելու նպատակով, սակայն ա-
ռաջարկութիւնները չարկեցին ոչ թէ
այն պատճառով, որ Գերմանիան մեր-
ժեց, այլ այն պատճառով, որ նա նախ-
նական պայման էր առաջարկել, որ
Պրանսիան, Գերմանիան և Ռուսաս-
տանը փոխադարձ երաշխաւորութիւն
տան իրանց եւրոպական երկրների
միջին: («Հ. Գ.»)

Բերլին, 16 հոկտեմբերի
Լոնդոնից տեղեկութիւններ համա-
տար, Վիլհելմ Թագաւորի խօսակցու-
թիւնը այնտեղ ևս մեծ տպաւորու-
թիւն է թողել, բայց առաւօտեան
լրագիրները ընդհանրապէս այնքան էլ
ոչ ոքով չեն քննում: Մի քանի լրա-
գիրներ այդ խօսակցութեան մէջ տես-
նում են կոպտ մի ձգտում թշնա-
մութիւն սերմանելու Անգլիայի, Ռու-
սաստանի և Պրանսիայի միջև այն
հիման վրա, որ վերջին երկու պե-
տութիւնները կամենում էին մի-
ջամուկ Անգլիայի շահերի վերջին
բուրգական պատերազմի ժամանակ:

(«Հ. Գ.»)

Հետեւաւ սենսացիոն լուրերը քաղելով
«Kacht» լրագրից՝ հաղորդում ենք վերա-
պահովեալ:

Կ. Պ. Ս. 14 հոկտեմբերի. — Հայ
թերթերը հաղորդում են, որ ե-
րէկ հայկական տների վրա արուար-
ձաններում նշանակված էին խա-
չեր: Լուրեր են տարածվում, որ իբր
սպասվում է քրիստոնեաների շարք
բնակցիւնների կողմից:

Վիլհելմ, 14 հոկտեմբերի. — Պո-
ւից հաղորդում են, որ ամեն կող-
մից ստացվում են յուզիչ լուրեր:
Աղաքանակութիւնը տեղեկային եռան-
դով գիշերում է: Բազմաթիւ հայ-յե-
ղափոխականներ եկան, որոնք յայտ-
նում են, որ հին բեմեր վերականգ-
նելու փորձի դէպքում նրանք կունե-
նան բաւականաչափ դիմադրանք,
մայրաքաղաքը յոյս ցնդեցնելու հա-
մար: Երկուստեք-թիւրքերի հեղինա-
կութիւնը խախտված է:

Բուդապէշտ, 16 հոկտեմբերի

Աւստրիական պատգամաւորութեան
մէջ շարունակվեց Բոսնիայի հարցի
քննութիւնը: Պետական ֆինանսական
մինիստր Բուրիսը պատասխանելով
նկատելութիւններին, որ եթէ կրա-
մարժը ընդգծեց, որ երկրի կառավա-
րութիւնը չը կարողացաւ դաւաճել
Բոսնիայի և Սերբիայի ազգաբնակչու-
թեան սրտերը, նա իր կողմից պէտք
է յայտնէ, որ միացումը ամենուրեք
հանգիստ, անգամ ցնծութեամբ ըն-
դունվեց ազգաբնակչութիւնից: Բոս-
նիան ծովին մօտ ընկած չէ, Սեր-
բիայից ծովը մտնելու համար կարելի
է միշտ անցնել Բոսնիայի և Դալմա-
ցիայի միջով:

Այսպէս, Բոսնիայի գումարայտու-
ցութիւնը ընդունելուց յետոյ, պատ-
գամաւորութիւնը ձեռնարկեց զինու-
թական սովորական բիւջէի քննութեան:
(«Հ. Գ.»)

Բէլգրադ, 11 հոկտեմբերի

Պարիզի լուսնական ուսանողները
կոմիտէ, հեռագրով ողջունելով Բէլ-
գրադի ուսանողներին, իր համերաշ-
խութիւնն է արտայայտել Սերբիայի և
միջին է Բոսնիայի և Հերցեգովին-
այի իւրացման առիթով Աւստրիայի
դէմ ուղղված բողոքին: Միևնույն ժա-
մանակ լուսնական ուսանողները յի-
շենում են սերբերին Բուլղարիայի և
Տրանսիլանիայի լուսնական մասին,
որոնց ևս սպասում է Բոսնիայի և
Հերցեգովինայի միջակ: Այդ պատ-

ճառով լուսնականները միանում են սեր-
բերի լուսնային լիգային:

Վիլնա, 11 հոկտեմբերի

Կ. Պոլսի դիվանագիտական շրջա-
նում յամառ մրցութիւն է տեղի
ունենում Անգլիայի և Գերմանիայի
միջև Բ. Դրան քաղաքականութեան
վրա ազդելու նպատակով: Դիվանա-
գիտական միջամտութիւնը չի
և Լուսնայի միջև, Թիւրքիայի հրա-
ժարականը բնակցութիւնը Աւստ-
րիայի հետ շարունակելու՝ այստեղ
համարում են անգլիական դեսպանի
յաղթութիւնը: Աւստրիական դիվա-
նագիտական վտանգ է, իսկ պաշտօնա-
կան թերթերում յայտ են տեսնում
յոյուածներ խիստ յարձակունքներով
ու անգոր զարկով լի Անգլիայի
դէմ: Անգլիայի յաղթութիւնը վերա-
բերում են նրան, որ սրբ Լուսնայի
փաշային խոստացել է բարոյական և
ֆինանսական աջակցութիւն: Թիւր-
քիայի ներկայ ճգնաժամը վնասակա-
ն վարկեանը հանդիսացաւ: Անգլիան
խոստացել է Թիւրքիային նոյնպէս
եւանդոլն աջակցութիւն ցոյց տալ
բնակցիւնի դէմ, մինչև իսկ իր նա-
ւատարմը ուղարկել Կ. Պոլսի հարկա-
ւոր դէպքում:

Լուսնայի հետ խօսակցելուց յետոյ
Բեմիլ-փաշան վերադարձել է մի-
նիստերին խորհրդի ընդհատված
նիստը, որտեղ և որոշվել է անմիջա-
պէս մերժել Աւստրիայի առաջարկած
բնակցութիւնները:

Տեղական պաշտօնական թերթերը
լուր են տարածում, որ բուլղարո-
թիւրքական պատերազմի դէպքում
անգլիական նաւատորմից կանցի-
լի Գորադնիկը ներկայ է խաբարի կը
ձգի Բուլղարիայի վրա Կոնստանդնու-
քում: («P. C.»)

Բէլգրադ, 3 հոկտեմբերի

Պալատի առաջ կայացած ցոյցի ժա-
մանակ Պետոյ թագաւորը ասաց ժո-
ղովրդին. «Կը ապաստեմ կոնֆերենցիա-
յին: Անարդար լինի դէպքում կը
մեռնենք բոլորս միասին»: («K.C.»)

Բերլին, 3 հոկտեմբերի

Արտաքին գործերի մինիստրութեան
մէջ Մոսկովայի թերթերի թղթակցնե-
րին ասել են, որ Գերմանիան համա-
ձայնվել է կոնֆերենցիայի գումարա-
նի և այնտեղ կը պաշտպանէ Աւստրիա-
յին: Սերբիային հողային վարձատ-
րութիւն տալը անկարելի է համար-
վում, գրաւականը սակայն համարվում
է թալանի: («K.C.»)

Պարիզ, 13 հոկտեմբերի

Մամուլը կարեւոր նշանակութիւն է
տալիս Ռուսաստանի և Իտալիայի
միջև ընդգծմանը: Իտալիային գրաւելով
Ռուսաստանը, Անգլիան ու Պրանսիան,
երկիւղ կարող է լինել կոնֆերենցիա-
յին կոմպրոմիսային ստանալ Թիւրքիա-
յի, Սերբիայի և Զերնոգորիայի համար
և այդպիսով ապահովել նրանց Աւստ-
րիայի ու Գերմանիայի տոնաւորութիւն-
ները, որոնք չեղվում են կոնֆերեն-
ցիայից: («B.»)

Պետերբուրգ, 11 հոկտեմբերի

Ամենաարժանաւոր աղբիւրից հա-
ղորդում են, որ ռուսաց ղեկավարող
շրջաններում խիստ սառնութիւն է
նկատվում դէպի բուլղարական ծեր-
նանք իշխանը: Նրան թագաւոր ձա-
նաչելու լուրը դիմադրութեան է հան-
դիպում: («P. C.»)

Լոնդոն, 11 հոկտեմբերի

Այստեղ հարմարում են Վիլհելմի
մամուլի խօսելու տոնի վրա, որը կա-
տարել է այն բանից, որ Թիւրքիան
հրաժարվեց բնակցութիւն վարել
Աւստրիայի հետ, և այդ բանում մե-
ղադրում են Անգլիային: Այստեղ գրա-
ւում են, որ աւստրիական դիվանա-
գիտական երեխայական միամտութիւն
գործեց առաջարկելով Թիւրքիային,
կոնֆերենցիայից դուրս երաշխաւո-

րութիւններ նրա տիրապետութիւննե-
րի անձեռնմխելութեան մասին, եթէ
որ նա հաշտվելու լինի Բոսնիայի և
Հերցեգովինայի միացման քայլին: Այդ
համաձայնութիւնը հաւասարադր կը
լինէր Թիւրքիայի վրա աւստրո-ուն-
գարական գերիշխանութիւն հաստա-
տելուն: Թիւրքիան հասկանում է, որ
Եւրոպան երբեք չի թող տայ այդ
և այդ պատճառով խոչընդոտեց հրա-
ժարվեց բնակցութիւններից:

(«P. C.»)

Վիլնա, 16 հոկտեմբերի

«Cor. Bureau»-ն հաղորդում է Կ.
Պոլսից, որ Ուսկուրի նախագահական
պաշտօնից արձակել են աւստրիական
պարանքների դէմ յայտարարված բոյ-
կոտի մասնակցներին համար: Նրա տեղ
նշանակված է նորը: («Հ. Գ.»)

Լոնդոն, 11 հոկտեմբերի

Այստեղ յամառ լուր է տարածվել,
որ Գերմանիան վնասակա կերպով
հրաժարվել է մասնակցել կոնֆերեն-
ցիային: («P. C.»)

Լոնդոն, 16 հոկտեմբերի

Սերբիական մինիստր Միլոսովիչը
յայտնեց Բէլգրադի զորահրամարտի
թղթակցին, որ նա միանգամայն գոհ է
արտաքին գործերի մինիստրութեան
մէջ նրան ցոյց տրված ընդունելու-
թիւնից:

Գրէյը համակարար լսեց իրերի
զրուցական մասին նրա հաղորդած
տեղեկութիւններ: Միլոսովիչը յայտ
ունի, որ բերմանական կառավարու-
թիւնը հակված է աջակցել սերբիական
գործին: Սերբիայի և Զերնոգորիայի
զինուորական համաձայնութիւն կապե-
լու վերաբերութեամբ Միլոսովիչը
ասաց, որ ոչ մի համաձայնութիւն չէ
պահանջվում, երկու երկրները գոր-
ծում են ձեռք-ձեռքի տուած, որովհե-
տե նրանց շահերը միևնույն են:

Եթէ Սերբիան, մինիստրի ասելով,

Полицейская. 7.